ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 1-ին և 2-րդ հարցերին:

«Հաշվի առնելով մարդկության ու քաղաքակրթության դեմ Թուրքիայի կողմից կատարված այս նոր հանցագործությունները՝… դաշնակից կառավարությունները սույնով հրապարակավ հայտնում են Բարձր դռանը, որ իրենք այդ հանցագործությունների համար անձնապես պատասխանատու են համարելու թուրքական կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև կառավարության տեղական այն ներկայացուցիչներին, ովքեր մասնակից են եղել կոտորածներին»:

1 Ե՞րբ է արվել այդ հայտարարությունը:

1) 1916 թ. ապրիլի 26–ին
2) 1915 թ. մայիսի 11–ին
3) 1895 թ. մայիսի 11–ին
4) 1915 թ. ապրիլի 26–ին

2 Ո՞ր երկրների կառավարություններն են ընդունել այն:

1) Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և ԱՄՆ
2) Ռուսաստան, ԱՄՆ և Իտալիա
3) Ֆրանսիա, Իտալիա և Մեծ Բրիտանիա
4) Ռուսաստան, Մեծ Բրիտանիա և Ֆրանսիա

3 Ո՞վ է ստորև բերված խոսքերի հեղինակը:

«….Ասորեստանը զուրկ էր մարդու ունեցած արժեքի գիտակցությունից, որ այնքան էական է քաղաքակրթության համար…Ռուս ասուրագետ Նիկոլսկին, որն Ուրարտուի անցյալի առաջին հետազոտողներից մեկն է, շատ լավ նկատել ու ընդգծել է ասուրական վայրենի ոգու և Ուրարտուի շատ ավելի մեղմ ու մարդկային ոգու միջև եղած հակադրությունը….»:

1) Նիկողայոս Ադոնց
2) Առաքել Բաբախանյան
3) Միքայել Չամչյան
4) Ղևոնդ Ալիշան

Կարդացե՛ք ստորև բերված հատվածը և պատասխանե՛ք 4-րդ և 5-րդ հարցերին:

«….Նավերը, որոնցով նավարկում են գետն ի վար՝ դեպի …..., կլոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը Ասորեստանից վերև է, նրանք կտրում են ուռենիներ, որոնցով պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման…»:

4 Ո՞վ է վերը բերված խոսքերի հեղինակը:

1) Ստրաբոն
2) Պլուտարքոս
3) Քսենոփոն
4) Հերոդոտոս

5 Համաձայն սկզբնաղբյուրի՝ ո՞ր քաղաք էին գնում նավերը:

1) Դամասկոս
2) Անտիոք
3) Բաբելոն
4) Երուսաղեմ

Կարդացե՛ք ստորև բերված հատվածը և պատասխանե՛ք 6-րդ և 7-րդ հարցերին:

«…. թագավորն ու Ներսես եպիսկոպոսապետը կանգնած մնացին Նպատ լեռան վրա, և Սուրբ Ներսես, իր մշտատարած ձեռքերը երկինք բարձրացնելով, խնդրում էր Տիրոջից, որ խնայե իր ուխտին և իր Սուրբ եկեղեցիներին…»:

6 Ո՞ր ճակատամարտին է վերաբերում պատմիչի նկարագրածը:

1) Ավարայրի ճակատամարտ
2) Ակոռիի ճակատամարտ
3) Ձիրավի ճակատամարտ
4) Արյան լճի ճակատամարտ

7 Ո՞վ է եղել հայոց սպարապետը այդ ճակատամարտում:

1) Վահան Մամիկոնյան
2) Մուշեղ Մամիկոնյան
3) Վարդան Մամիկոնյան
4) Աշոտ Բագրատունի

Կարդացե՛ք մեջբերված խոսքը և պատասխանե՛ք 8-րդ և 9-րդ հարցերին:

«Ես չեմ, որ կհրավիրեմ ձեզ, արտասահմանյան հա՛յ երիտասարդներ, այլ դժբախտ հայրենիքին հողն ու քարը իրենց արյունով ներկած մեր նահատակներն ու պաշտելի հերոսներն են, որ կոչ կընեն ձեզի՝ զենքի, զինավարժության ու վրեժխնդրության: Լսեցե՛ք անոնց ձայնը, որ մեր կյանքի ձայնն է»:

8 Ո՞ր գրքից է մեջբերումը:

1) «Ղեկավար ձեռնարկ»
2) «Մարտական հրահանգներ»
3) «Ղեկավար հրահանգներ»
4) «Մարտական փորձություն»

9 Ո՞վ է հեղինակը:

1) Անդրանիկ Օզանյանը
2) Հրայր Դժոխքը
3) Նիկոլ Դումանը
4) Աղբյուր Սերոբը

10 Ո՞ր փաստաթղթից է մեջբերված հատվածը:

«Ցո՛ւյց տանք աշխարհին, որ երկչոտ, անզգա ստրուկներ չենք, որ մենք ևս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարվում են մեր անկապտելի իրավունքները»:

1) Երևանի Հայոց ազգային խորհրդի կոչից
2) Արևմտահայերի առաջին համագումարի կոչից
3) Ազգային պատվիրակության հեռագրից
4) Եվրոպայի հայ ուսանողների միության հեռագրից

Կարդացեք մեջբերումը և պատասխանեք 11-րդ և 12-րդ հարցերին:

«.... Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները .... Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կրող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»:

11 Որտե՞ղ են հայտարարվել մեջբերված խոսքերը:

1) ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում
2) ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարում
3) ԼՂԻՄ մարզխորհրդի նիստում
4) ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում

12 Ի՞նչ պաշտոն էր զբաղեցնում մեջբերված խոսքերի հեղինակը:

1) ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար
2) ՀԽՍՀ կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար
3) ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ
4) «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավար

Կարդացեք մեջբերումը և պատասխանեք 13-րդ և 14-րդ հարցերին:

«.... փոխադարձ համաձայնությամբ և կարճ ժամանակում ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաղորդակցության ճանապարհները բացելու համար»:

13 Ո՞ր պայմանագրից են մեջբերված խոսքերը:

1) Կարսի պայմանագիր
2) Ալեքսանդրապոլի պայմանագիր
3) «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագիր
4) «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագիր

14 **Որտե՞ղ են ընթացել բանակցությունները։**

1) Կարսում
2) Մոսկվայում
3) Բաքվում
4) Կ. Պոլսում

15 **Տերմինների հետևյալ բացատրություններից ո՞րն է ճիշտ։**

1) Աքեմենյան տերության կազմում Հայաստանը բաժանվում էր խոշոր վարչական շրջանների, որոնք կոչվում էին հյուպարքոսություններ։
2) Բեհիսթունյան եռալեզու արձանագրության պարսկերեն բաժնում Հայաստանը անվանվում էր Հարմինույա։
3) Վանի թագավորությունում զորքի գերագույն հրամանատարը կոչվում էր առաջին սպարապետ։
4) Վանի թագավորությունը բաժանվում էր խոշոր վարչական շրջանների, որոնք կոչվում էին մարզեր։

16 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները։**

ա. Կայսրընտիր իշխան Հովհան Վիլհելմին ներկայացրած Հայաստանի ազատագրության Իսրայել Օրու ծրագիրը հայտնի է «Պֆալցյան» անվանումով։
բ. Հնդկաստանի հայ վաճառականության հետ պայմանագիր կնքած անգլիական կազմակերպությունը կոչվում էր Արևելասիական ընկերություն։
գ. Ազատագրական պայքարի այն ձևը, երբ հայերը տարերայնորեն, անկազմակերպ դուրս են եկել կենաց ու մահու կռվի՝ իրենց ապրելու իրավունքն ու արժանապատվությունը պաշտպանելու համար, հայտնի է հայդուկային կամ ֆիդայական շարժում անունով։
դ. Արևելյան Հայաստանի տարածքում ռուսական իշխանությունների ստեղծած և 12 տարի գոյություն ունեցած վարչական միավորը կոչվում էր Կարսի մարզ։
ե. Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրության ծրագիրը հայտնի է Հարավային ծրագիր անունով։
զ. Պանթյուրքիզմի ազգայնամոլական գաղափարախոսության գերնպատակն է համախմբել թյուրքալեզու ժողովուրդներին մեկ միասնական պետության մեջ, որը կոչվելու է Մեծ Թուրան։
է. Արցախում 1720-ական թթ. գոյություն ունեցած պաշտպանական հենակետային ամրությունները կոչվել են սղնախներ։

1) գ, զ, է
2) բ, դ, ե
3) ա, ե, է
4) բ, դ, զ

17 Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ։

1) 1918 թ. մայիսի 31-ին Հայոց ազգային խորհրդի պատվիրակները հասան Բաթում և դիմեցին Վեհիբ փաշային՝ առաջարկելով սկսել բանակցություններ։
2) 1920 թ. մայիսի 7-ին հրաժարական ներկայացրեց Ա. Խատիսյանի կառավարությունը, որին փոխարինեց Համո Օհանջանյանի կոալիցիոն կառավարությունը։
3) Հայաստանի առաջին հանրապետությունում հողի մասին օրենքն ընդունվել է 1920 թ. Մայիսյան ապստամբության ճնշումից հետո։
4) Բաթումի պայմանագրի՝ Հայաստանի համար ծանր պայմանները վերանայելու նպատակով 1918 թ. հուլիսին Կ. Պոլիս մեկնեց ՀՀ դիվանագիտական առաքելությունը՝ Համո Օհանջանյանի գլխավորությամբ։

18 Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ

ա. Հայրենական մեծ պատերազմին մասնակցած դիվիզիաներից առաջինը կազմավորվել է 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որն աչքի է ընկել Լենինգրադի պաշտպանության ժամանակ։
բ. 1940 թ. հունվարի 15-ին Լազր Չափչախյանին շնորհվել է հերոսի կոչում։
գ. 1989 թ. նոյեմբերի 28-ին ընդունված «Լեռնային Ղարաբաղի մարզում իրադրությունը կարգավորելու միջոցառումների մասին» ԽՍՀՄ ԳԽ որոշմամբ ԼՂԻՄ-ը թողնվում էր Ադրբեջանի կազմում։
դ. Ազգային միացյալ կուսակցության հիմնադիրն էր Հայկազ Խաչատրյանը՝ Շահեն Հարությունյանի և Ստեփան Զատիկյանի հետ։
ե. 2003 թ. մայիսի 25-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո կոալիցիոն նոր կառավարություն են ձևավորել ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն և ՀՅԴ-ն։
զ. 1991 թ. մայիսի 7-ին Խանլարի շրջանի Գետաշեն գյուղից երեք հազար մարդ տեղափոխվել է Ստեփանակերտ, այնտեղից էլ՝ Հայաստանի տարբեր շրջաններ։
է. 1989 թ. օգոստոսի 16-ին տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարն ընտրեց Հատուկ կառավարման կոմիտե։

1) ա, գ, ե
2) բ, դ, է
3) գ, դ, զ
4) բ, ե, զ

19 **Ընտրել ճիշտ պնդումները:**

ա. Հայկական լեռնաշխարհը հյուսիսից եզերվում է Կուր գետով, հյուսիս-արևմուտքից՝ Պոնտոսի լեռներով, հարավից՝ Հայկական Տավրոսի լեռնաշղթայով և Հյուսիսային Միջագետքի հարթավայրով:
բ. Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող Տիգրիս և Եփրատ գետերը միախառնվում են Ակն քաղաքի մոտ և թափվում Պարսից ծոց:
գ. Արաքս գետը ունի մոտ հազար կմ երկարություն և ամբողջապես հոսում է Հայաստանի տարածքով:
դ. Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդազրույցը մեզ է հասել Ագաթանգեղոսի շնորհիվ:
ե. Մովսես Խորենացու հաղորդմամբ՝ Արտաշատ մայրաքաղաքում գոյություն ունեցած մեհենական պատմագրության արխիվից օգտվել է Բարդածանը:
զ. Հայ պատմիչները վկայություններ են պահպանել հայկական նախամաշտոցյան այբուբենի մասին:
է. Հայկական լեռնաշխարհում Ք.ա. X դարի 80-70-ական թվականներին հիշատակվող խոշոր պետական կազմավորումներն էին Արատտան և Հայասան:

1) դ, ե, զ
2) բ, դ, է
3) գ, ե, է
4) ա, գ, զ

20 **Արաբական խալիֆայության տիրապետության շրջանին վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. Սմբատ Բագրատունու 2 000-անոց հեծելազորի և արաբական 5 000-անոց պատժիչ ջոկատի միջև ճակատամարտը տեղի է ունեցել Խլաթում:
բ. Վարդանակերտի ճակատամարտում պարտված արաբական զորքը մեծ կորուստներ է ունեցել Արածանին անցնելիս:
գ. 748-750 թվականների հակաարաբական ապստամբության ժամանակ հայ իշխաններին օժանդակել է Բյուզանդիան՝ ուղարկելով օգնական զորք:
դ. Արաբների տիրապետության ողջ ընթացքում հայ հոգևորականությունը ազատված է եղել հարկ վճարելուց:
ե. Արճեշի ճակատամարտում զոհվել են չորս հայ իշխաններ և 1500 ռամիկներ:
զ. VIII դ. սկզբի հակաարաբական ապստամբությունն ընդգրկել է Երևանը, Վանանդը, Վասպուրականը:
է. Հերթ ոստիկանի աշխարհագրով ոչ մահմեդականներից գանձվող ծխահարկը փոխարինվել է գլխահարկով:

1) ե, զ, է
2) բ, գ, է
3) բ, գ, ե
4) ա, դ, զ

21 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. Գալուստ Շերմազանյանը թատերական շենքի վերածած իր երկհարկանի տանը 1827 թ. բեմադրել է հայ և օտար դրամատուրգների պիեսներ:
բ. Ղուկաս Ինճիճյանն ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է հին և նոր Հայաստանի նահանգների, բնակավայրերի, դրանց բնակչության ու տեղագրության հարցերին:
գ. Մադրասում 1836–1837 թթ. հրատարակվել է «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» մեծարժեք բառարանը:
դ. Հայերենով գրված համաշխարհային պատմության առաջին ձեռնարկը՝ «Տիեզերական պատմության» երկհատորյակը, մեծ ճանաչում է բերել պատմաբան Հովսեփ Գաթըրճյանին:
ե. XVIII դ. առաջին կեսին են ստեղծագործել Հովնաթանյանների չորրորդ սերնդի ներկայացուցիչներ բնանկարիչ Մկրտում Հովնաթանյանը և նրա որդիներ Հակոբն ու Աղաթոնը:
զ. Հայտնի նկարիչ Ստեփանոս Ներսիսյանին մեծ ճանաչում են բերել Մ. Մաշտոցի, Ս. Պարթևի, Ա. Տեր–Ղուկասյանի, Վ. Բեհբութովի դիմանկարները, «Խնջույք Քուռ գետի ափին» գեղանկարը:
է. Ռուս պատմաբան Մարի Բրոսեն գրել է «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատությունը:

1) ա, գ, զ
2) բ, դ, զ
3) դ, ե, է
4) բ, գ, ե

22 **Թվարկվածներից որո՞նք են Մծբինի 298 թ. պայմանագրի հետևանքներ:**

ա. Սասանյան Պարսկաստանին անցավ Աղվանքը:
բ. Տրդատ III–ը վերջնականապես ճանաչվեց Մեծ Հայքի թագավոր:
գ. Փոքր Հայքը վերադարձվեց Հայաստանին:
դ. Տրդատ III–ը սկսեց զբաղվել երկրի հզորացմամբ և շինարարությամբ:
ե. Ներսեհը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:
զ. Մեծ Հայքին միացվեց Փայտակարանը:
է. Հայ-պարսկական սահմանը գծվեց Հեր գավառով:

1) բ, դ, ե
2) ա, դ, է
3) ա, գ, զ
4) բ, ե, զ

23 **Թվարկվածներից ո՞րը արևմտահայերի առաջին համագումարի արդյունք չէ։**

1) Անդրանիկի գլխավորությամբ ստեղծվեց արևմտահայ երկրապահ դիվիզիան։
2) Արևմտահայ ազգային խորհրդի նախագահ ընտրվեց Վահան Փափազյանը (Կոմս)։
3) Ընտրվեց կենտրոնական ղեկավար մարմին՝ 15–հոգանոց Արևմտահայ ազգային խորհուրդ։
4) Վանի, Բիթլիսի և Էրզրումի մարզերում սկսեցին գործել Արևմտահայ ազգային խորհրդի տեղական կազմակերպությունները։

24 **Տրվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։**

ա. 1995 թ. Սահմանադրության ընդունման շնորհիվ դրվեցին ամբողջատիրական և ավտորիտար համակարգից դեպի ժողովրդավարական պետության անցնելու իրավական հիմքը։
բ. 1994 թ. կուսակցությունների վերաբերյալ օրենքը խախտելու հետևանքով կասեցվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը։
գ. 1991 թ. դեկտեմբերին Թուրքիայի կողմից ՀՀ անկախությունը ճանաչելու հետևանքով հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ երկու երկրների միջև։
դ. Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունման արդյունքում ընդունվել է նաև Գերմանիայի մեղսակցությունը այդ ցեղասպանությանը։
ե. Շուշիի ազատագրման հետևանքով ճեղքվեց շրջափակման օղակը և Արցախը ցամաքային ճանապարհով միացավ Հայաստանի Հանրապետությանը։
զ. ԼՂՀ ռազմական հաջողությունների հետևանքով 1993 թ. Ադրբեջանում տեղի ունեցավ հերթական իշխանափոխությունը։
է. Բեռլինի 1994 թ. ԵԱՀԿ գագաթնաժողովում Արցախյան խնդրի լուծումը ազգերի ինքնորոշման սկզբունքի հետ կապելու հետևանքով բանակցությունները մտան փակուղի։

1) գ, դ, զ
2) ա, բ, ե
3) բ, գ, է
4) ա, դ, զ

25 **Վանի համահայկական թագավորության ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Սկյութների ասպատակությունների սկիզբը
բ. Թագավորության վերածումը գերտերության
գ. «Չորս ծովերի» տերության ստեղծումը
դ. Միասնական դիցարանի ստեղծումը
ե. Կիմերների հետ դաշնակցելը
զ. Վանի աշխարհակալության ստեղծումը
է. Խալդիի տաճարի ավիրումը Սարգոն II-ի կողմից

1) գ, դ, է, զ, բ, ե, ա
2) զ, բ, գ, ե, ա, է, դ
3) դ, բ, զ, գ, է, ե, ա
4) բ, դ, գ, է, զ, ա, ե

26 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը:**
«Բայց, այնուամենայնիվ, Երկիրը պտտվում է»:

1) Մայքլ Ֆարադեյ
2) Ֆրենսիս Բեկոն
3) Ջորդանո Բրունո
4) Գալիլեո Գալիլեյ

27 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը:**
«Ավելի լավ է կերտել նորություններ, քան պատմել դրանց մասին»:

1) Հենրի Ֆորդ
2) Ուինսթոն Չերչիլ
3) Հարի Թրուման
4) Թոմաս Էդիսոն

28 **Ո՞ր երկրի կառավարման համակարգին է վերաբերում հետևյալ արտահայտությունը՝**
« Թագավորն իշխում է, բայց չի կառավարում»:

1) Անգլիա
2) Ռուսաստան
3) Ֆրանսիա
4) Գերմանիա

29 Ո՞վ է հետևյալ արտահայտության հեղինակը:
« Ես մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ»:

1) Դենի Դիդրոն
2) Ֆրենսիս Բեկոնը
3) Ռենե Դեկարտը
4) Գալիլեո Գալիլեյը

30 Ո՞ր պետությունում են հնչեցվել հետևյալ խոսքերը:

« .... Բացառությամբ Ազգերի բրիտանական համագործակցության և ԱՄՆ-ի, ուր կոմունիզմը գտնվում է սաղմնային վիճակում, կոմկուսները կամ հինգերորդ շարասյուները գնալով մեծացող սպառնալիք և վտանգ են ներկայացնում քրիստոնեական քաղաքակրթության համար»:

1) Ֆրանսիա
2) Գերմանիա
3) Ամերիկայի Միացյալ Նահանգներ
4) Մեծ Բրիտանիա

31 Ո՞ր թվականի ընտրություններից հետո է Մ. Թեթչերը ասել հետևյալ խոսքերը:

«Մեր քաղաքականությունը միտված է ապահովելու, որ կայուն եկամուտ ունեցող յուրաքանչյուր ոք դառնա սեփականատեր: Մենք կառուցում ենք սեփականատերերի ժողովրդավարություն»:

1) 1984 թ.
2) 1987 թ.
3) 1979 թ.
4) 1980 թ.

32 Տերմինների հետևյալ բացատրություններից ո՞րն է ճիշտ:

1) Հռոմեակաթոլիկական եկեղեցու բարեփոխման համար ծավալված շարժումը կոչվում էր ռեֆորմացիա:
2) Հատուկ կազմակերպությունը, ուր միավորվում էին միևնույն մասնագիտության տեր արհեստավորներին, կոչվում էր գիլդիա:
3) Առևտրականների ստեղծած հատուկ միավորումը միջնադարյան քաղաքներում կոչվում էր համքարություն:
4) Սենյորի կողմից ավատը վասալին հանձնելու արարողակարգը կոչվում էր ավտարկիա:

33 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

ա. Արտադրության մեքենայացման գործընթացը, որն սկսվել էր XVIII դ. 60–ական թվականներից Անգլիայում, հայտնի է արդյունաբերական հեղաշրջում անունով:
բ. Սոցիալիզմի ուսմունքի հետևորդներին այլ կերպ անվանում են համայնավարներ:
գ. Արևելյան հարցը Ռուսական կայսրության հպատակ ազգերի ազատագրման հիմնախնդիրների ամբողջությունն է:
դ. Հասարակական կազմակերպությունները, որոնք ձեռնարկատերերը ստեղծում էին իրենց իրավունքները պաշտպանելու համար, կոչվում էին արհեստակցական միություններ:
ե. Խաղաղության կողմնակիցների միջազգային շարժումն այլ կերպ անվանում են պացիֆիստական շարժում:
զ. Իրանում և Թուրքիայում XIX դ. կեսերին սկսված բարենորոգումների նոր փուլը կոչվում էր թանզիմաթ:
է. Պատերազմում պարտված երկրի կողմից կատարվող դրամական վճարը հաղթող երկրին կոչվում է կոնտրիբուցիա:

1) բ, գ, է
2) ա, դ, ե
3) բ, դ, զ
4) ա, ե, է

34 **Տրված պնդումներից որո՞նք են վերաբերում Հռոմի դիկտատոր Սուլլայի գործունեությանը:**

ա. Ծերակույտին է հանձնել պրովինցիաների կառավարիչների նկատմամբ վերահսկողությունը:
բ. Բնակչությանը բաժանել է գույքային խմբերի:
գ. Պաշտոնի դիմաց մտցրել է վարձատրություն:
դ. Պետության դրամական միջոցների տնօրինումը շնորհել է Ծերակույտին:
ե. Նախկին լուսնային օրացույցը փոխարինել է արևայինով:
զ. Ի հաշիվ իր կողմնակիցների՝ Ծերակույտի անդամների թիվը հասցրել է 900-ի:
է. Կազմել է օրենքից դուրս հայտարարված մարդկանց ցուցակներ և ենթարկել մահապատժի:

1) ա, դ, է
2) ե, զ, է
3) բ, գ, դ
4) գ, զ, ե

35 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Երեսնամյա պատերազմն ավարտվել է Հաբսբուրգների պարտությամբ, իսկ Շվեյցարիան դարձել է Եվրոպայի ամենահզոր երկիրը:
բ. Սոցիալիզմի ուսմունքի ստեղծողներից էին Անրի Սեն-Սիմոնը և Ռոբերտ Օուենը:
գ. Չինաստանում 1911-1912 թթ. տեղի ունեցած հեղափոխությունը գլխավորում էր Կան Յուվեյը:
դ. Եկատերինա II կայսրուհու օրոք Ռուսաստանում ընդունվել է օրենք ազատ ձեռներեցության մասին:
ե. ԱՄՆ-ում ստրկության վերացման գործում մեծ դեր է խաղացել նախագահ Աբրահամ Լինկոլնը:
զ. Պատերազմներն իրենց բնույթով լինում են միայն անարդարացի:
է. Ճապոնիայում Տոկուգավաների այոգունությունը տապալվեց 1889 թ. սահմանադրության ընդունումով:

1) ա, զ, է
2) ա, ե, զ
3) բ, դ, ե
4) բ, դ, է

36 **Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ:**

1) 1956 թ. Հունգարիայի կառավարությունը հայտարարեց Վարշավյան դաշինքից դուրս գալու մտադրության մասին, ինչը հանգեցրեց սոցիալիստական ճամբարից Հունգարիայի հեռացմանը:
2) 1950-ական թթ. ԱՄՆ-ում սկսվեց հակակոմունիստական արշավ, որին նպաստել էին միջուկային ռումբի ստեղծումը և կոմունիստական հեղափոխության հաղթանակը Չինաստանում:
3) «Իրական ժողովրդավարության» փոխարեն դը Գոլն առաջարկում էր ստեղծել «կուսակցությունների վարչակարգ»՝ պետության ղեկավարի անուղղակի ընտրություններով և հանրաքվեներով:
4) 1946 թ. Իտալիայում անցկացված հանրաքվեով ժողովրդի մեծամասնությունը դեմ արտահայտվեց հանրապետության հռչակմանը:

37 **Թվարկվածներից ո՞րը Առաջին աշխարհամարտի պատճառ չէ:**

1) Գերմանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև խորացել էին հակասությունները:
2) Սրվել էր տերությունների միջև պայքարը սպառման շուկաների համար:
3) Ազգայնականությունը շատ երկրներում վերաճել էր ազգայնամոլության:
4) Թուլացել էր Սրբազան դաշինքի դերը խաղաղության պահպանման գործում:

38 **Տրվածներից որո՞նք են Գիտատեխնիկական հեղափոխության հետևանք:**

ա. Գիտության և արտադրության միձուլման հետևանքով գիտությունը դարձավ արտադրողական ուժ:
բ. Միկրոէլեկտրոնիկայի զարգացումը հնարավորություն է տալիս փոքրացնելու սարքավորումների չափերը, նվազեցնելու էներգիայի ծախսը և իջեցնելու ապրանքների ինքնարժեքը:
գ. Աշխատավարձերի բարձրացման և սոցիալական ապահովության համակարգի կատալերագործման հետևանքով մարդիկ դարձան զանգվածային արտադրության ապրանքների զանգվածային սպառողներ:
դ. Երկրորդ փուլի խոշոր նվաճումներից էր լուսնի վրա ԱՄՆ տիեզերագնացների իջնելը:
ե. Արդյունաբերության մեջ արհեստական նյութերի օգտագործման ծավալները աստիճանաբար նվազեցին:
զ. Ծառայությունների և առևտրի ոլորտներում զբաղված մարդկանց թիվը զգալի նվազեց:
է. Երկրորդ փուլի կարևոր ձեռքբերումներից էր խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման մեկնարկը:

1) դ, ե, զ
2) ա, դ, զ
3) ա, բ, գ
4) բ, գ, է

39 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Մարաթոնի ճակատամարտը
բ. Երկրորդ եռապետության ստեղծումը
գ. Գավգամելայի ճակատամարտը
դ. Կեսարի հռչակումը ցմահ դիկտատոր
ե. Կինոսկեֆալեի ճակատամարտը
զ. Եգիպտոսի նվաճումը Ալեքսանդր Մակեդոնացու կողմից
է. Կյուրոս Կրտսերի ապստամբությունը Արտաքսերքսես II-ի դեմ

1) է, զ, ա, ե, գ, դ, բ
2) ա, է, զ, գ, ե, դ, բ
3) է, ա, զ, ե, գ, բ, դ
4) ա, զ, է, գ, ե, բ, դ

40 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը ըստ ժամանակագրական հաջորդականության:**

ա. ՉԺՀ-ում «մշակութային հեղափոխության» սկիզբը
բ. Անկախացումից հետո Հնդկաստանում սահմանադրության ընդունումը, որով Հնդկաստանը հռչակվեց հանրապետություն
գ. Ճապոնիայում ԱՄՆ ռազմակալական վարչակարգի ավարտը
դ. Թուրքիայի կողմից Կիպրոսի տարածքի 40 տոկոսի գրավումը
ե. Քաղաքական նշանավոր գործիչ Մուհամմադ Մոսադեղի Իրանի վարչապետ դառնալը
զ. Չինաստանի դառնալը աշխարհի չորրորդ միջուկային զենք ունեցող տերություն
է. Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումը

1) ա
2) դ
3) զ
4) գ

41 **Արշակունյաց արքայատոհմի շրջանին վերաբերող տերմինների հետևյալ բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատարը կոչվում էր սպարապետ:
2) Պալատական արարողությունների և օտար երկրների դեսպանների ընդունելության համար պատասխանատու գործակալին անվանում էին թագադիր ասպետ:
3) Հայ նախարարների տեղն արքունիքում սահմանող փաստաթուղթը կոչվում էր զորանամակ:
4) Ժառանգաբար հորից որդուն անցնող մասնավոր հողատիրության ձևը կոչվում էր գանձագին:
5) Թագավորական ոստանի պաշտպանությունը իրականացնող հեծյալ ջոկատներից կազմված զորամասը կոչվում էր արքունական գունդ:
6) Արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը իրականացնող գործակալին անվանում էին հայր մարդպետ:
7) Արշակունյաց շառավիղներից ձևավորված ազնվական խավի ներկայացուցչին անվանում էին ոստանիկ:

42 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

1) Ռուսաստանի հետադիմական վարչակարգի հակահայ քաղաքականության դեմ հայ ժողովրդի պայքարը կազմակերպելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»:
2) Բոլշևիկների Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում ստեղծված իշխանության նոր մարմինը կոչվում էր Անդրկովկասյան հատուկ կոմիտե:
3) Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ, Նախիջևան, ու Օրդուբադ գավառներն ընդգրկող վարչական միավորը, որը հիմնվել էր 1849 թ., կոչվում էր Երևանի նահանգ:
4) Լոնդոնում դիվանագետներ Մ. Սայքսի ու Ժ. Պիկոյի միջև կնքված համաձայնագրով հիմնականում հայերից կազմված զորամիավորը կոչվում էր «Արևելյան լեգեոն»:
5) Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմի Կովկասյան ճակատում գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի գլխավորությամբ կռվող ռուսական զորամիավորումը կոչվում էր Կովկասյան կորպուս:
6) Արևմտահայ ազգային խորհրդի որոշումով ստեղծված զորամիավորումը կոչվում էր Հայկական կորպուս:
7) Հովսեփ Արղությանի ղեկավարած մարմինը կոչվում էր Կ.Պոլսի Ազգային բյուրոյի գործադիր կոմիտե:

43 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Սյունիքի Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան առաջին համագումարը ինքնավար Սյունիքը վերանվանում է Լեռնահայաստան:
2) 1918 թ. հուլիսի 22-26-ին Շուշիում կայացած արցախահայության առաջին համագումարը կազմեց կառավարություն, որը կոչվում էր «Ղարաբաղ» կոմիտե:
3) Հայաստանի առաջին հանրապետության բարձրագույն օրենսդիր իշխանության առաջին մարմինը կոչվում էր Հայաստանի խորհուրդ:
4) Հայաստանի խորհրդայնացումից հետո ստեղծված իշխանության տեղական գործադիր մարմինները կոչվում էին հեղկոմներ:
5) ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարը կազմավորեց ՀՍԽՀ օրենսդիր իշխանության մարմին, որը կոչվում էր Կենտրոնական գործադիր կոմիտե:
6) 1919 թ. սեպտեմբերին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների միավորմամբ ստեղծված կենտրոնական ղեկավար մարմինը կոչվում էր Ամերկոմ:
7) Փետրվարյան ապստամբության ժամանակ Երևան մտնելուց հետո ապստամբած ուժերը այնտեղ ստեղծեցին իշխանության նոր մարմին, որը կոչվում էր Հայ օգնության կոմիտե:

44 **Գտնել այն երեք պայմանները, որոնք տեղ են գտել Տիգրան Մեծի և Գոդերձ II-ի միջև կնքված հայ-պարթևական հաշտության պայմանագրում:**

1) Հօգուտ Հայաստանի՝ պարթևները հրաժարվել են Հյուսիսային Միջագետքից և Մարաստանից:
2) Հայ-պարթևական դաշինքն ամրապնդելու նպատակով հայոց արքայադուստրն ամուսնացել է Գոդերձ II-ի որդու հետ:
3) Գոդերձ II-ը պարտավորվել է իր զորքով մասնակցելու Տիգրան Մեծի կազմակերպած արշավանքներին:
4) Պարթևստանը ճանաչել է Տիգրան Մեծի գերիշխանությունը՝ Օսրոյենեն, Ադիաբենեն և Միգդոնիան հետ ստանալու դիմաց:
5) Պարթևստանը վերադարձրել է Հայաստանից խլած Յոթանասուն հովիտները:
6) Պարթևների արքան հրաժարվել է «արքայից արքա» տիտղոսից, որն այնուհետև կրել են Տիգրանն ու իր հաջորդները:
7) Հռոմի դեմ Պարթևստանի պատերազմելու դեպքում Տիգրան Մեծը խոստացել է օգնական ուժեր տրամադրել Գոդերձ II-ին:

45 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունն ունեցել է մոտ 30 անդամ, որոնք փորձել են զենք առաքել արևմտահայ եղբայրներին:
2) Գրիգոր Արծրունու ազատագրական խմբակը հիմնվել է Երևանում:
3) «Միություն ի փրկություն» կազմակերպության դատապարտված 40 անդամներից հինգի նկատմամբ մահապատժի վճիռ է կայացվել:
4) Զեյթունի 1862 թ. ապստամբությունը մեծ ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության աննախընթաց բարձրացման վրա:
5) Արևմտյան Հայաստանում ստեղծված առաջին խմբակներից հայտնի է «Հայասեր - ազգասեր»-ը:
6) Բեռլինի վեհաժողովից հետո հայ հասարակական–քաղաքական գործիչներն իրենց հույսը սկսում են կապել Ռուսաստանի ռազմաքաղաքական աջակցությամբ զինված պայքար ծավալելու հետ:
7) «Բարենպատակ ընկերություն» և «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակների նպատակն է եղել ոչ միայն ազատագրել Արևմտահայաստանը, այլև հասնել ազգի երկու հատվածների միավորմանը:

46 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ։**

1) Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանն էլ կազմակերպեց հայ հոգևորականության պայքարը Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման օրենքի գործադրման դեմ։
2) Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման հակահայ օրենքի դեմ հայության մղած պայքարը պսակվեց հաջողությամբ, և ընդունումից երեք տարի անց այն չեղյալ հայտարարվեց։
3) Ռուսաստանյան առաջին հեղափոխության ուժերը մասնատելու նպատակով ցարական վարչակարգը ազգամիջյան բախումներ հրահրեց բազմազգ կայսրության տարածքում։
4) Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագրով առաջարկվում էր Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքել առևտրական պայմանագիր և Սև ծովի ափին Հայաստանին տրամադրել նավահանգիստ։
5) Ներսես Աշտարակեցու և Խաչատուր Աբովյանի ջանքերով 1826 թ. ստեղծվեցին հայկական կամավորական ջոկատներ։
6) Բուխարեստի հաշտության պայմանագիրը կնքվել է հայազգի մեծահարուստ Մանուկ բեյ Միրզայանի միջնորդությամբ։
7) Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինն էր կազմել Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ծրագիրը։

47 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ 1920 թ. հուլիսի 4-ի որոշումով խախտվեց ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը։
2) ՀՍԽՀ առաջին սահմանադրությամբ աշխատանքը պարտադիր պարտականություն էր համարվում բոլորի համար՝ «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքով։
3) «Ստալինյան ինքնավարացման ծրագիրը» պաշտպանություն գտավ Վ. Լենինի կողմից և դարձավ ԽՍՀՄ կազմավորման հիմքը։
4) Փետրվարյան ապստամբության ժամանակ խորհրդային ուժերին ինքնաթիռով հասցված 47 կգ ոսկին օգտագործվեց Իրանից անհրաժեշտ ապրանքներ գնելու համար։
5) 1920 թ. Խորհրդային Ռուսաստանում մշակվել և ընդունվել է Նոր տնտեսական քաղաքականությունը, որի առանցքը պարենմասնատրումն էր։
6) Հայկական պատվիրակությունը 1921 թ. հունվարին Ա. Բեկզադյանի գլխավորությամբ ուղևորվում է Մոսկվա և մասնակցում ռուս-թուրքական կոնֆերանսին։
7) Հայհեղկոմի 1921 թ. ապրիլի որոշմամբ Խորհրդային Հայաստանում արգելվեցին բոլոր տեսակի բռնագրավումները, սահմանվեց առևտրի և գների ազատականացում։

48 **Թվարկվածներից որո՞նք են IX-XI դարերում միասնական և կենտրոնացված հայկական պետության ստեղծման ձախողման պատճառ հանդիսացել:**

1) Անիի թագավորները պայքար չէին մղում կենտրոնախույս ուժերի դեմ:
2) Կենտրոնացված պետության ստեղծմանը խանգարեցին մոնղոլների արշավանքները:
3) Հայաստանի նշանավոր և հզոր իշխանությունները հաճախ անկախության էին ձգտում:
4) Թագավորական իշխանությունը և եկեղեցին մշտական բախումների մեջ էին և հոգ չէին տանում երկրի միասնականությունը պահպանելու մասին:
5) Բյուզանդիան հայոց պետությունը թուլացնելու, երկրի արևմտյան տարածքները կայսրությանը միացնելու քաղաքականություն էր վարում:
6) Բագրատունյաց Հայաստանը որդեգրել էր արևելյան կողմնորոշում և համագործակցում էր Արաբական խալիֆայության հետ:
7) Արաբական խալիֆայությունը ամեն կերպ օժանդակում էր երկրի կենտրոնախույս ուժերին:

49 **Գտնել ճիշտ պատասխանները:**
Բրեստ–Լիտովսկում ստորագրված պայմանագրի հետևանքով՝

1) Ռուսաստանը դադարեցրեց իր մասնակցությունը Առաջին աշխարհամարտին:
2) Բոլշևիկները կորցրեցին իրենց իշխանությունը Մոսկվայում:
3) Լուծարվեց Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետությունը:
4) Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում ավարտվեց պատերազմը:
5) Օսմանյան Թուրքիային անցան Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերը:
6) Ռուսաստանը իր զորքերը շուտափույթ դուրս հանեց Կարսի և Բաթումի մարզերից:
7) Ռուսաստանը պարտավորվեց ճանաչել Արևմտյան Հայաստանը որպես արևմտահայության հայրենիք:

50 **Թվարկված պատճառահետևանքային կապերից որո՞նք են ճիշտ։**

1) Թուրքմենչայի պայմանագրի արդյունքում հազարավոր հայեր վերաբնակվեցին Արևելյան Հայաստանում։
2) 1724 թ. Կ.Պոլսի պայմանագրով Ռուսաստանը տեր դարձավ մերձսևծովյան տարածքներին։
3) 1853–1856 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում ձևավորվեց Կարսի մարզը։
4) Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանը ձեռք բերեց Անապան, Փոթին և Ղարաբաղը։
5) Սան Ստեֆանոյի պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը ձեռք բերեց Կարսը, Կաղզվանը, Օլթին, Արդահանը։
6) Ադրիանուպոլսի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը ձեռք բերեց Բեսարաբիան։
7) Հայ ժողովրդի նկատմամբ Նադիր շահի ցուցաբերած դրական վերաբերմունքի պատճառներից էր հակաթուրքական պայքարում հայ բնակչության օժանդակությունը ստանալը։

51 **Թվարկվածներից որո՞նք են սխալ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։**

1) Զանգվածային բռնաճնշումների հետևանքով 1930-ական թթ. Հայաստանում դատապարտվել է 12 հազար մարդ, որից 2100-ը գնդակահարվել է։
2) Հայկական տարածքների հարցում Անգլիայի և ԱՄՆ-ի դիրքորոշման պատճառով Պոտսդամի կոնֆերանսում Ստալինը զիջեց և հարցը հանեց քննարկումից։
3) Խորհրդային Հայաստանում կոլեկտիվացման հետևանքով ավելացավ գյուղացիների նյութական շահագրգռվածությունը, աճեց աշխատանքի արտադրողականությունը։
4) Սառը պատերազմի սկսվելու, Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծման և դրան Թուրքիայի անդամակցելու հետևանքով ԽՍՀՄ կառավարությունը հայտարարեց Թուրքիայից տարածքային պահանջներ չունենալու մասին։
5) Այլախոհական շարժման հետևանքով պահպանվեց ազգային անկախ պետականության վերահաստատման գաղափարի կենսունակությունը։
6) ՀՅԴ ինքնավերացման համագումարի կոչի հետևանքով արտասահմանի ընկերները հեռացան դաշնակցությունից, իսկ Հայաստանում ընդհատակյա բոլոր կառույցները դադարեցրեցին իրենց գործունեությունը։
7) Հայրենական մեծ պատերազմում Հայ առաքելական եկեղեցու ազգանվեր գործունեության հետևանքով խորհրդային կառավարությունը մեղմացրեց եկեղեցու նկատմամբ բռնաճնշումների քաղաքականությունը։

52 **Ընտրել տերմինների ճիշտ բացատրությունները:**

1) Հռոմում բանակի հրամանատարությունն իրականացնող պաշտոնյային անվանում էին քվեստոր:
2) Միանձնյա կառավարման ժամանակավոր եղանակը Հին Հունաստանում կոչվում էր տիրանիա:
3) Հռոմի ժողովրդական ժողովը կոչվում էր կոմիցիաներ:
4) Ժողովրդական ժողովը Հին Աթենքում կոչվել էր ապելլա:
5) Կառավարման նոր համակարգը Հռոմի ուշ կայսրության դարաշրջանում կոչվել է դոմինատ:
6) Պետության համար վտանգ ներկայացնող քաղաքացիների վտարման կարգը Ատտիկայում կոչվել է պրինցեպս:
7) Հին Հունաստանում դասական շրջանի քաղաքի հասարակական և առևտրական կենտրոնը կոչվում էր ակրոպոլիս:

53 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները:**

1) ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտի բարեփոխումների նախագիծը կոչվում էր «նոր ազգայնականություն»:
2) Ֆրանսիայի պատմության 1852-1870 թթ. շրջանը հայտնի է Երկրորդ հանրապետություն անունով:
3) Իտալիայում XVIII դ. վերջից սկսված հզոր շարժումը կոչվում էր Ռիսորջիմենտո, որը նշանակում է Վերածնություն:
4) Ֆրանսիայի Դասային համաժողովը Մեծ հեղափոխության սկզբնական շրջանում իրեն հռչակեց Ազգային ժողով, ապա կոչվեց Սահմանադիր ժողով:
5) Անգլիայում 1640-1649 թթ. տեղի ունեցած իրադարձությունները հայտնի են «Փառահեղ հեղափոխություն» անվանումով:
6) Պահպանողական ուղղության հետևորդներին այլ կերպ անվանում են նաև լիբերալներ:
7) Անգլիայի պատմությունից հայտնի զանգվածային շարժումը, որի նպատակն էր հասնել տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի իրագործմանը, կոչվում է չարտիզմ:

54 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են սխալ:**

1) 1949 թ. ստեղծված, Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասը տնտեսապես միավորող կազմակերպությունը կոչվում էր Տնտեսական փոխօգնության խորհուրդ:
2) Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի ազդեցության տակ գտնվող արևմտյան ժողովրդավարական ու զարգացած երկրների խմբավորումը անվանվել է առաջին աշխարհ կամ արևմտյան խմբավորում:
3) Ֆրանսիայում շրջանառության մեջ դրված դիրիժիզմ հասկացությունը բացառում էր պետության միջամտությունը տնտեսության կառավարմանը:
4) Երկրորդ աշխարհամարտի Արևմտյան ճակատում 1939 թ. սեպտեմբերի 3-ից մինչև 1940 թ. մայիսի 10-ը տիրող իրավիճակը ստացել է «տարօրինակ պատերազմ» անունը:
5) «Երրորդ աշխարհին» ընդհանրացնող հասկացություն է, որ բնորոշում է հիմնականում այն երկրները, որոնք ապագաղութացման բովով են անցել վերջին երկու հարյուրամյակի ընթացքում:
6) 1945 թ. կայացած Յալթայի խորհրդաժողովի որոշման համաձայն ստեղծված նոր համաշխարհային կառույցը կոչվում էր Ազգերի լիգա:
7) Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կոալիցիան ստացել է Մեծ եռյակ անվանումը:

55 **Բյուզանդիայի վաղ միջնադարի պատմությանը վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Միասնական պետություն, օրենսդրություն, դավանանք ունենալու նպատակով Կոստանդիանոս Մեծ կայսրը ստեղծել է «Քաղաքացիական իրավունքի հավաքածու» օրենքների ժողովածուն:
2) Սասանյանների նվաճումների հետևանքով կայսրության արևմտյան պրովինցիաների կորուստը հանգեցրել է հույների դերի նվազմանը կայսրության կյանքում:
3) Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովում Կոստանդնուպոլսի աթոռը գերիշխող դիրք է ստացել Արևմուտքի բոլոր պատրիարքությունների նկատմամբ:
4) Արևելահռոմեական կայսրությունում մեծ դեր էր խաղում միապետին կից ստեղծված ավագների դուման:
5) Յարմուք գետի ափին տեղի ունեցած ճակատամարտում արաբների տարած հաղթանակով սկսվել է Բյուզանդիայի արևելյան պրովինցիաների նվաճումը:
6) 395 թ. բաժանումից հետո Արևելահռոմեական կայսրության կազմի մեջ մտել են Բալկանյան թերակղզին, Փոքր Ասիան, Հյուսիսային Միջագետքը, Հայաստանի մի մասը, Եգիպտոսը, Ղրիմ թերակղզու մի մասը:
7) Կայսրության բանակը հավաքագրվում էր հիմնականում ազատ գյուղացիներից:

56 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Ամբողջատիրական երկրում առկա է միակուսակցական բռնապետությունը, որն իր հետ բերում է պետական և կուսակցական կառույցների միաձուլում։
2) Բրիտանական կայսրության տիրույթները կառավարման տեսանկյունից առաջին աշխարհամարտից հետո բաժանված էին հինգ խմբի։
3) Վերսալյան պայմանագրով Լեհաստանը չունեցավ տարածքային ձեռքբերումներ, իսկ Գերմանիայի հաշվին տարածքներ ստացան Բելգիան և Դանիան։
4) Առաջին աշխարհամարտից հետո Նոր աշխարհակարգի ձևավորման սկզբունքների մեջ ներառվեցին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի 14 կետերը։
5) Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը թուլացավ նաև նրանից, որ ԱՄՆ-ը հրաժարվեց Վերսալյան պայմանագիրը վավերացնելուց և որդեգրեց մեկուսացման քաղաքականություն։
6) Խորհրդային Ռուսաստանը մասնակցել է և՛ Փարիզի վեհաժողովին, և՛ Վաշինգտոնի խորհրդաժողովին։
7) Առաջին աշխարհամարտից հետո ԱՄՆ-ն «հաղթող երկրների մեջ պարտված» պետություն էր, կրել էր մարդկային ու նյութական խոշոր կորուստներ։

57 **Թվարկվածներից որո՞նք են խաչակրաց արշավանքների հետևանքներ։**

1) Միջերկրածովյան առևտրում բարձրացավ արաբ և բյուզանդացի առևտրականների դերը։
2) Արևելքում եվրոպացիները ծանոթացան հողագործական նոր մշակաբույսերի հետ՝ ձմերուկ, ծիրան, կիտրոն, բրինձ։
3) Երուսաղեմի գրավումը ավելի խորացրեց բյուզանդական և հռոմեակաթոլիկական եկեղեցիների միջև գոյություն ունեցող հակասությունները։
4) Արևմտյան Եվրոպայից Արևելք սկսեց արտահանվել մետաքս, որը խթանեց արհեստագործության զարգացումը։
5) Աճեցին Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող ապրանքափոխանակության ծավալները։
6) Արևելքում եվրոպացիները ծանոթացան թնդանոթին։
7) Մուսուլմանական աշխարհում ձևավորվեց Սրբազան պատերազմի գաղափարախոսությունը։

58 **Պատմական իրադարձությունների և երևույթների թվարկված պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են ճիշտ։**

1) Իտալիան համեմատաբար տնտեսապես հետամնաց երկիր էր, այդ պատճառով նրա արդիականացումն հեշտ և արագ ընթացավ։
2) Առաջին աշխարհամարտի հասարակական-քաղաքական գլխավոր հետևանքը Խորհրդային Ռուսաստան պետության ստեղծումն էր։
3) Ֆրանսիական մեծ հեղափոխության հետևանքով ավարտվեց Գերմանիայի քաղաքական միավորումը։
4) Երիտթուրքերի հեղաշրջման արդյունքում Օսմանյան տերությունը դարձավ սահմանադրական միապետություն։
5) Արդյունաբերական հեղաշրջման արդյունքում Ռուսաստանը դարձավ աշխարհի տնտեսապես ամենազարգացած երկիրը։
6) Իրանում XX դարի սկզբին տեղի ունեցած հեղափոխության շնորհիվ երկրում մի որոշ ժամանակ հաստատվեց սահմանադրական կարգ։
7) Առաջին աշխարհամարտի հետևանքով փլուզվեցին չորս կայսրություններ՝ Ռուսաստանը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան։

59 **Թվարկածներից որո՞նք են սխալ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։**

1) Բարգավաճման ժամանակաշրջանի հետևանքով ԱՄՆ-ը դարձավ կապիտալիստական աշխարհի հզորագույն տերությունը։
2) «Մյունխենյան գործարքի» հետևանքով Սուդեթի մարզը և Հարավսլավիայի մի շարք շրջաններ տրվեցին Գերմանիային, Ֆրանսիային և Անգլիային։
3) 1939 թ. Մոնղոլիայի դեմ Ճապոնիայի ռազմական գործողությունների պատճառով ԽՍՀՄ-ը բանակցություններ սկսեց Իտալիայի հետ և կնքվեց չհարձակման վերաբերյալ պայմանագիր։
4) 100 օրվա ընթացքում Ռուզվելտի ընդունած 60-ից ավելի օրենքների հետևանքով ձևավորվեց «Նոր կուրսը»։
5) Մեծ ճգնաժամի պատճառով ԱՄՆ-ի «հավերժական բարգավաճման» գաղափարը շատ արագ տեղի տվեց հոռետեսությանը։
6) Նոր տնտեսական քաղաքականության գործադրման հետևանքով Խորհրդային Ռուսաստանի տնտեսությունը դարձավ բազմաբնույթ. կային սոցիալիստական, մասնավոր, կոոպերատիվ և խառը կազմով ձեռնարկություններ։
7) 1930-ական թթ. ԽՍՀՄ-ում ձևավորված պլանային տնտեսության հետևանքով մասնավոր սեփականությունն ու շուկայական տնտեսությունը շարունակեցին գոյություն ունենալ։

60 **Թվարկվածներից որո՞նք 1920 թ. հոկտեմբերի 30-ին Կարսի անկման պատճառներից չեն։**

1) Թուրքական բանակի հրամանատարությունը չպահպանեց մինչ այդ իրենց կողմից ներկայացված զինադադարի պայմանները։
2) Հայկական զորքի մեծ մասը նահանջել էր։
3) Թույլ էր զինվորների և հրամանատարության բարոյահոգեբանական և մարտական վիճակը։
4) Իրենց բարձրության վրա էին և՛ Կարսը պաշտպանող հայ զինվորները, և՛ բանակի հրամանատարությունը։
5) Բոլշևիկների դավադիր և քայքայիչ գործունեությունը թուլացրել էր հայկական բանակի դիմադրական ոգին։
6) Հայկական զորքը թվապես զիջում էր թշնամուն։
7) Մեծ տերություններից ստացված աջակցությունը փոքրաթիվ էր։

61 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են սխալ։**

1) Վրաստանում 2003 թ. տեղի ունեցած «գունավոր հեղափոխությունը» ստացել է «Նարնջագույն հեղափոխություն» անվանումը։
2) Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրներում 2010 – 2011 թթ.տեղի ունեցած հեղափոխությունների, ապստամբությունների և զանգվածային ելույթների համատարած ալիքը պատմության մեջ մտել է «Փոթորիկ անապատում» անվամբ։
3) 1940-ական թթ. սկսված գիտատեխնիկական առաջընթացի նոր փուլը ստացել է գիտատեխնիկական հեղափոխություն անվանումը։
4) Գիտատեխնիկական հեղափոխության երկրորդ փուլը հաճախ անվանվում է բարձր տեխնոլոգիաների դարաշրջան։
5) ԽՍՀՄ-ում Մ. Գորբաչովի ձեռնարկած բարեփոխումները ստացել են «տնտեսական հրաշք» անվանումը։
6) Ագրեսիայի այն տարատեսակը, որի ժամանակ տեղի է ունենում մի պետության կողմից մյուս պետության ամբողջ տարածքի բռնի միավորումը կամ զավթումը, կոչվում է բռնազավթում կամ անեքսիա։
7) Արտադրության և աշխատանքի կազմակերպման այն ձևը, որը հիմնվում է խմբային սեփականության վրա, կոչվում է ազգայնացում։
8) Այն խնդիրները, որոնք ընդհանուր են ողջ մարդկության համար և վերաբերում են մարդու կյանքի բնականոն ընթացքի ապահովմանը, անվանվում են գլոբալ հիմնախնդիրներ։

62 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Անտանտը ձևավորվել է 1910 թվականին՝ Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Ֆրանսիա կազմով։
2) Կուբան ձևականորեն անկախ պետություն է հռչակվել 1902 թվականին։
3) Ռուսաստանի նախաձեռնությամբ Հաագայում 1889 թ. հրավիրվել է 26 պետությունների համաժողով, որտեղ հանձնարարվել է պետություններին կրճատել ռազմական ծախսերը և զորքերի թվաքանակը։
4) 1879-1882 թթ. ստեղծվել է ռազմաքաղաքական Եռյակ դաշինքը՝ Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա կազմով։
5) Անգլո-բուրական պատերազմը տեղի է ունեցել 1894-1895 թթ.։
6) Հաագայում 1897 թ. Ֆրանսիայի նախաձեռնությամբ հրավիրված երկրորդ համաժողովում հստակեցվել են ցամաքում և ծովում պատերազմ վարելու կանոնները։
7) Վիեննայի վեհաժողովի հաստատած «ուժերի հավասարակշռության» համակարգը պահպանվել է մինչև 1920 թվականը։
8) ԱՄՆ-ը XIX դ. վերջին և XX դ. սկզբին Լատինական Ամերիկայում վարում էր «մեծ մահակի» քաղաքականություն։

63 **Հայ միջնադարյան մշակույթին վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցու որմնանկարներին պատկերված են Տրդատ Մեծը և Սբ Գրիգոր Լուսավորիչը։
2) Մովսես Տաթևացին հիմնել է Անդրեաս առաքյալի անապատը Էջմիածնում և Հարանց անապատի դպրոցը Սյունիքում։
3) Հայ գիտական միջավայրում IV դարում փիլիսոփայությամբ զբաղվել է Ճարտասան և մանկավարժ Պարույր Հայկազնը։
4) Ուսուցչապետ Հովհաննես Իմաստասերը մշակել է Նոր Գետիկի վարդապետական կրթության ծրագիրը։
5) Հայ միջնադարյան հեղինակներից առաջին անգամ տպագրության են արժանացել Անանիա Շիրակացու, Դավիթ Անհաղթի, Փավստոս Բուզանդի գործերը։
6) Հայ մատենագրության մեջ վաղմիջնադարյան շրջանից զարգացել է գրքերը մանրանկարներով զարդարելու արվեստը։
7) Հայ խոջաները Հին Ջուղայի գերեզմանատանը կանգնեցրել են ավելի քան 10 հազար ճոխ քանդակներով խաչքարեր և խոյանման տապանաքարեր։
8) XII դարի կենսաբան և բժիշկ Մխիթար Հերացին եղել է օսմանյան սուլթանի անձնական բժիշկը։

64 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են սխալ։**

1) 1988 թ. փետրվարի 21-ին ԽՄԿԿ կենտկոմի՝ «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշմամբ Արցախյան շարժումը ստացավ «ծայրահեղական» անվանումը։
2) Հայոց պահանջատիրության հարցը պաշտպանելու նպատակով ՀՅԴ կողմից ԱՄՆ-ում ստեղծված մարմինը կոչվում էր Հայկական ազգային կոմիտե։
3) ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի կողմից Թուրքիայի նախագահին Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպմանը հրավիրելը միջազգային դիվանագիտության կողմից անվանվեց «խավիարային դիվանագիտություն»։
4) ԽՍՀՄ-ում 1920-ական թթ. վերջից սկսված արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման, գործարանների կառուցման, երկաթուղային ցանցի ընդլայնման քաղաքականությունը ստացավ երկրի արդյունաբերացում անվանումը։
5) 1960-ական թթ. խորհրդային իրականությունը փոփոխելու պայքարի ուղին ընտրած մարդկանց սկսեցին կոչել այլադավան անվամբ։
6) 1999 թ. մայիսի 30-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ ՀՀԿ-ի, ՀԺԿ-ի և Երկրապահ-կամավորականների միության համախմբմամբ ձևավորված դաշինքը կոչվում էր «Հանրապետություն» միավորում։
7) 1992 թ. Շուշիի ազատագրման ռազմական գործողությունը ստացավ «Հարսանիք լեռներում» անվանումը։
8) 1950-ական թթ.կեսից մինչև 1960-ական թթ.կեսը ԽՍՀՄ պատմության մեջ է մտել «լճացում» անվամբ։

65 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ։**

1) Խորհրդային Հայաստանի ուսուցիչների 1-ին համագումարը
2) Լենինականի պետական թատրոնի բացումը
3) «Երեքի» գրական խմբակի կազմավորումը
4) Երևանի կոնսերվատորիայի հիմնադրումը
5) Հայաստանում առաջնահերթ հանրակրթական երկու տիպի դպրոց՝ տարրական և յոթնամյա, ստեղծելու մասին ՀՍԽՀ լուսժողկոմատի որոշման ընդունումը
6) Եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքի ստեղծումը

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Ավստրո-Հունգարիա երկմիասնական կայսրության ստեղծումը
2) Թանզիմաթի սկիզբը Օսմանյան կայսրությունում
3) Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրության վերացումը
4) Փարիզի կոմունայի պարտությունը
5) Իտալական թագավորության հռչակումը
6) Պետրոս Մեծի կողմից նոր մայրաքաղաքի կառուցումը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Հեթումյաններից գահի անցումը Լուսինյաններին
2) Մառիի ճակատամարտը
3) Հաշտության պայմանագրի կնքումը Լևոն II-ի և Բոհեմունդ III-ի միջև
4) Հեթում I թագավորի մեկնումը Կարակորում
5) Միրիոկեֆալոնի ճակատամարտը
6) Գագիկ II-ի սպանության վրեժի լուծումը
7) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Հռոմկլա

68 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Եղվարդի թուրք–պարսկական ճակատամարտը
2) Աբրահամ սպարապետի գլխավորությամբ Գյուլիստանի սղնախի պայքարի շարունակումը թուրքերի դեմ
3) Մովսես Սարաֆյանի կողմից Հայաստանի ազատագրության ծրագրի կազմումը
4) Արցախի անջատումը Գանձակի խանությունից և Խամսայի մելիքության ստեղծումը
5) պարսկական շահի կողմից Դավիթ բեկի իշխանության ճանաչումը
6) «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի լույսընծայումը Մադրասի տպարանում
7) Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի բանակցությունները Ռեչ Պոսպոլիտայի թագավոր Յան Սոբեսկու հետ

69 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Քաղաքացիական պատերազմի ավարտը ԱՄՆ-ում
2) Վիեննայի վեհաժողվի ավարտը
3) Երկրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
4) Հունաստանի անկախանալը Օսմանյան կայսրությունից
5) Տոկուգավաների սյոգունության վերացումը
6) ԱՄՆ-ի Անկախության հռչակագրի ընդունումը
7) Ճորտատիրության վերացումը Ռուսաստանում

70 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության վերանվանումը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության
2) Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի կողմից Հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանագրի ստորագրումը
3) ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 3-րդ համագումարի կողմից ԽՍՀՄ Սահմանադրության 6-րդ հոդվածի չեղյալ հայտարարելը
4) Արևելյան Գերմանիայում սոցիալիստական վարչակարգի փլուզումը
5) ՆԱՏՕ-ի օդուժի կողմից Սերբական Կրայինայի Հանրապետության ռմբահարումը
6) Ռուսաստանի պետական ինքնիշխանության մասին հռչակագրի ընդունումը
7) ԱՊՀ կանոնադրության ընդունումը